ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ2/4181/02/24**

**ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի հունիսի <<10>>-ին (ք. Երևան)

Ծանոթանալով «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ« ՍՊ ընկերության *(ՀՎՀՀ՝ 00131856, գտնվելու վայրի հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Երվանդ Քոչարի Փ., շենք 19, այսուհետ նաև՝ Հայցվոր*) ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի *(հաշվառման հասցե՝ ՀՀ, Արմավիր, համայնք Մեծամոր, Մեծամոր, 1 թղմ., շենք 1)*՝ «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող Է. Հովհաննիսյանի 13.05.24թ.-ի թիվ 1512-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ« ՍՊ ընկերության տնօրենը 29.05.2024 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ՝ «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող Է. Հովհաննիսյանի 13.05.24թ.-ի թիվ 1512-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

29.05.2024 թվականին Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը դատավորի աշխատակազմին էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել են 29.05.2024 թվականին:

Դատարանի 03.06.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն վերադարձվել է:

05.06.2024 թվականին Հայցվորը սահմանված ժամկետում կրկին ներկայացրել է հայցադիմումը:

Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը դատավորի աշխատակազմին էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել են 05.06.2024 թվականին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և 127-րդ հոդվածի 4-րդ մասի պահպանմամբ, իսկ այն դատարան կրկին ներկայացված լինելու հիմքով հայցադիմումը պետք է համարել առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ **29.05.2024 թվականին**:

Հայցվորի ներկայացուցչի կողմից պահպանվել են հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածներով առաջադրվող պահանջները:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 234.5-րդ հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

3. Թիվ ԵԴ2/4181/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024 թվականի հուլիսի 22-ին:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Digitally signed by ATANESYAN ANI 5101901431
Date: 2024.06.10 17:14:44 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am